ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԵՆՔԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/2

ք. Երևան «26» հունվարի 2020 թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար է. Գևորգյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Քլիներս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Պապիկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շենքերի մաքրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով

(գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 174 000 000 (մեկ հարյուր յոթանասունչորս միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 15 660 000 (տասնհինգ միլիոն վեց հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար դեկտեմբեր ամսվա համար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ

ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **10** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե ք. Երևան, Մ. Խորենացի 3,7 ՀՎՀՀ 02647057 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011054013 ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է. ԳԵՎՈՐԳՅԱՆ _____ /ստորագրություն/ Կ.Տ.	Քլիներս ՍՊԸ ք. Երևան, Կոմիտաս 36գ, բն. 78 ՀՎՀՀ 00130286 «Ամերիա բանկ» ՓԲԸ Հ/Հ 1570018464820100 Տնօրեն Գ. ՊԱՊԻԿՅԱՆ _____ /ստորագրություն/ Կ.Տ.

Հավելված N 1
«24» հունվարի 2020 թ. կնքված
ՀՀՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության								
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	90911110/531	**Ամենօրյա մաքրման ծառայություններ**	**դրամ**	**174 000 000**	**1**		
		1 գրասենյակային ցանկացած տեսակի գույքի, համակարգիչների և այլ տեխնիկայի վրայից մատնահետքերի, կեղտաբծերի, փոշու կամ այլ հետքերի մաքրում				**Երևան քաղաք** **1.Արարատյան 90- (1000 քմ)** **2.Մանթաշյան փողոց 55 - (1242.7 քմ)** **3.Ծով. Իսակովի պողոտա 10 - (5631.5 քմ)** **4.Ծով. Իսակովի պողոտա 10/16 (1815.29քմ)** **5.Սասունցի Դավթի թիվ 87 և 87ա - (1250.3 քմ)** **6.«Զվարթնոց» օդանավակայան, Երևան 42 - (490 քմ)** **7.Մ.Խորենացու փողոց թիվ 3, 7 և 7Ա - (8912.79 քմ)** **8. Սևանի փողոց 104/2 - (525.3 քմ)**	**Ծառայության մատուցումն իրականացվում, այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա, համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2020 թվականի դեկտեմբերի 30-ը:**
		2 շքամուտքերի, նախամուտքերի, միջանցքների (այդ թվում՝ միջանցքներում առկա կահույքի և տեխնիկայի, կամ այլ գույքի), դահլիճների (ամբողջ գույքով), աստիճանավանդակների, ընդհանուր օգտագործման այլ տարածքների մաքրում					
		3 սպասարկման և ընդհանուր սրահների ապակիների, ապակյա դռների, պատուհանագոգերի մաքրում հատուկ նյութերով					
		4 սանհանգույցների ամենօրյա (աշխատանքային օրվա ընթացքում 1.5 ժամը մեկ) մաքրում քիմիական նյութերով /սալիկապատ մակերեսների լվացում և ախտահանում, հայելիների մաքրում, փայլեցում, լվացարանների, զուգարանակոնքերի և դրանց հարող մակերեսների մաքրում և ախտահանում/					
		5 աղբամանների դատարկում, մաքրում, աղբի նոր տոպրակների տեղադրում, շենքից աղբի հեռացում					
		6 հատակի (այդ թվում՝ մանրահատակի, սալիկապատ հատակի, լամինատե հատակի) մաքրում					
		7 գորգերի, ուղեգորգերի, կավրոլինների և գորգանման այլ ծածկույթների մաքրում, փոշեզերծում փոշեկուլով					

		8	նախամուտքի մաքրում, ձյան տեղումների ընթացքում նախամուտքից ձյան և մերկասառույցի հեռացում առնվազն ժամը մեկ					9.Դեղատան փողոց թիվ 3 - (2628.7 քմ)	
		9	ՊԵԿ-ին պատկանող հարակից տարածքների մաքրում (100 քմ):					10.Ահարոնյան 12/3 - (1812.4 քմ)	
		Շաբաթական մաքրման ծառայություններ						11. Կոմիտասի պող. 35 - (4440.1 քմ)	
		10	տեղեկատվական վահանակների, ներքին և արտաքին ցուցանակների, սենյակային բույսերի, ջեռուցման մարտկոցների, դռների, բռնակների, վարդակների մաքրում					12.Շինարարների փողոց 3/1 - (1661.6 քմ)	
			Ամսական մաքրման ծառայություններ					13. Մոլդովական փողոց թիվ 41/3- (2343.4 քմ)	
		11	օդորակիչների և նկարների վրայից փոշու և այլ հետքերի մաքրում՝ ամսական 2 անգամ					14. Անդրանիկի փողոց 37/1 - (731.6 քմ)	
		12	պատուհանների, ապակյա վիտրաժների, հորիզոնական շերտավարագույրների լվացում և մաքրում՝ ամսական 1 անգամ						
		13	պատուհանների և դռների ճաղավանդակների, բազրիքների և ճաղաշարերի մաքրում՝ ամսական 1 անգամ						
		14	սանհանգույցների սալիկների, պատերի, առաստաղների մաքրում և ախտահանում՝ ամսական 1 անգամ						
		15	առաստաղների և պատերի փոշեզրկում, դրանց վրայի մաքրվող հետքերի, սարդոստայնների և այլ հետքերի վերացում						
			Եռամսյակային մաքրման ծառայություններ						
		16	Ջահերի և այլ լուսատուների լվացում (փետրվար, մայիս, օգոստոս, նոյեմբեր)						
			Տարեկան մաքրման ծառայություններ						
		17	շենքերի ճակատային մասի լվացում՝ տարին մեկ անգամ (ամռան ամիսներից որևէ մեկի ընթացքում)						
			Ձյան տեղումների դեպքում						
		18	Շենքերի տանիքների վրա գոյացած ձյան, սառույցի, ինչպես նաև տանիքների եզրերից կախված սառցալեզվակների մաքրում՝ պատվիրատուի պահանջով						
		19	Շքամուտքերի, մուտքերի առջևից ձյան և սառույցի հեռացում, ինչպես նաև ավազով և աղով մշակում						

- ✓ Կատարողը պետք է մաքրման աշխատանքներն իրականացնի յուրաքանչյուր աշխատանքային օր՝ մինչև առավոտյան ժամը 08:30, այդ ժամին տարածքը պետք է լինի պատշաճ մաքրված վիճակում: Կատարողը ծառայությունները մատուցելիս չպետք է խոչընդոտի ՀՀ ՊԵԿ բնականոն աշխատանքային գործունեությանը և ենթարկվի ՀՀ ՊԵԿ ներքին կարգապահական կանոններին: Որոշ դեպքերում աշխատանքային գրաֆիկը սահմանվում է Պատվիրատուի կողմից, և համաձայնեցվում է կողմերի միջև:
- ✓ Կատարողն աշխատանքային օրերին պետք է յուրաքանչյուր շենքում ապահովի առնվազն մեկ հերթապահություն իրականացնող աշխատակցի ներկայություն (հերթապահների թիվը և նրանց կողմից մատուցվող ծառայության տեսակը համաձայնեցնել Պատվիրատուի հետ)՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով՝ 9:00-18:00 ժամանակահատվածում, ինչպես նաև պետք է ապահովի առնվազն մեկ կոնտակտային անձի առկայություն, որը հասանելի կլինի յուրաքանչյուր օրացույցային օր՝ շուրջօրյա: Ընդ որում, բացի պլանային աշխատանքներից, Կատարողը պարտավոր է Պատվիրատուի առաջին իսկ կանչով՝ առավելագույնը 10 րոպեի ընթացքում ապահովել իր հերթապահ աշխատակցի ներկայությունը Պատվիրատուի կողմից մատնանշված վայրում և այնտեղ մատուցել սույն կետով նախատեսված ու այդ պահին պահանջվող ծառայությունները:
- ✓ Կատարողը պետք է իր աշխատակիցներին ապահովի Կատարողի տարբերանշանով համազգեստով:
- ✓ Մաքրման ծառայությունների ընթացքում օգտագործվող լվացող-մաքրող նյութերը, մաքրող և փայլեցնող կտորները, աղբի տոպրակները, զուգարանների թղթերը, օդի թարմացուցիչները, հեղուկ օճառները, սարքերը և սարքավորումներն ամբողջությամբ տրամադրվում են Կատարողի կողմից: Սանհանգույցի յուրաքանչյուր խցիկում կատարողը պետք է ապահովի մշտական երկուական զուգարանի թղթի, իսկ յուրաքանչյուր լվացարանի մոտ՝ հեղուկ օճառի առկայություն համապատասխան տարայով(ում):
- ✓ Կատարողը պետք է փոխհատուցի իր կողմից պատճառված նյութական վնասը:
- ✓ Կատարողը պարտավոր է տեղումնառատ ամիսներին նախամուտքերի առջև տեղադրել խոզանականման ծածկույթով գորգեր (նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ)
- ✓ Գնային առաջարկի հաշվարկը ներկայացված է 365 օրացույցային օրվա համար:
- ✓ Կատարողին /դեկտեմբեր ամսվա համար/ կտրամադրվի պայմանագրի ընդհանուր գնի մինչև 9 տոկոսի չափով կանխավճար:
- ✓ Պայմանագրին կցվում է մասնակցի կողմից ներկայացված ծառայությունների մատուցման միավոր գները (Հավելված 1.1):

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«Քլիներս» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7	ք. Երևան, Կոմիտաս 36գ, բն. 78
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 00130286
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011054013	Հ/Հ 1570018464820100
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար	Տնօրեն
Է.ԳԵՎՈՐԳՅԱՆ _____ /ստորագրություն/	Գ. ՊԱՊԻԿՅԱՆ _____ /ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1.1
«24» հունվարի 2020 թ. կնքված
ՀՀՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/2 ծածկագրով պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԻԱՎՈՐԻ ԳՆԵՐԸ

ՀՀ դրամ

Ծառայություն*				
Հ/հ	անվանումը	հ/հ	տեխնիկական բնութագիրը	Միավորի գին /ՀՀ դրամ/
1	Շենքերի մաքրման ծառայություններ	1	գրասենյակային ցանկացած տեսակի գույքի, համակարգիչների և այլ տեխնիկայի վրայից մատնահետքերի, կեղտաբծերի, փոշու կամ այլ հետքերի մաքրում	**50000**
		2	շքամուտքերի, նախամուտքերի, միջանցքների (այդ թվում՝ միջանցքներում առկա կահույքի և տեխնիկայի, կամ այլ գույքի), դահլիճների (ամբողջ գույքով), աստիճանավանդակների, ընդհանուր օգտագործման այլ տարածքների մաքրում	**70000**
		3	սպասարկման և ընդհանուր սրահների ապակիների, ապակյա դռների, պատուհանագոգերի մաքրում հատուկ նյութերով	**50000**
		4	սանհանգույցների ամենօրյա (աշխատանքային օրվա ընթացքում 1.5 ժամը մեկ) մաքրում քիմիական նյութերով /սալիկապատ մակերեսների լվացում և ախտահանում, հայելիների մաքրում, փայլեցում, լվացարանների, զուգարանակոնքերի և դրանց հարող մակերեսների մաքրում և ախտահանում/	**100000**
		5	աղբամանների դատարկում, մաքրում, աղբի նոր տոպրակների տեղադրում, շենքից աղբի հեռացում	**30000**
		6	հատակի (այդ թվում՝ մանրահատակի, սալիկապատ հատակի, լամինատե հատակի) մաքրում	**80000**
		7	գորգերի, ուղեգորգերի, կավրոլինների և գորգանման այլ ծածկույթների մաքրում, փոշեզերծում փոշեկուլով	**20000**
		8	նախամուտքի մաքրում, ձյան տեղումների ընթացքում նախամուտքից ձյան և մերկասառույցի հեռացում առնվազն ժամը մեկ	**900**
		9	ՊԵԿ-ին պատկանող հարակից տարածքների մաքրում (100 քմ):	**20000**

		10	տեղեկատվական վահանակների, ներքին և արտաքին ցուցանակների, սենյակային բույսերի, ջեռուցման մարտկոցների, դռների, բռնակների, վարդակների մաքրում	3000
		11	օդորակիչների և նկարների վրայից փոշու և այլ հետքերի մաքրում՝ ամսական 2 անգամ	3000
		12	պատուհանների, ապակյա վիտրաժների, հորիզոնական շերտավարագույրների լվացում և մաքրում՝ ամսական 1 անգամ	3000
		13	պատուհանների և դռների ճաղավանդակների, բազրիքների և ճաղաշարերի մաքրում՝ ամսական 1 անգամ	20000
		14	սանհանգույցների սալիկների, պատերի, առաստաղների մաքրում և ախտահանում՝ ամսական 1 անգամ	40000
		15	առաստաղների և պատերի փոշեզրկում, դրանց վրայի մաքրվող հետքերի, սարդոստայնների և այլ հետքերի վերացում	5000
		16	Ջահերի և այլ լուսատուների լվացում (փետրվար, մայիս, օգոստոս, նոյեմբեր)	20000
		17	շենքերի ճակատային մասի լվացում՝ տարին մեկ անգամ (ամռան ամիսներից որևէ մեկի ընթացքում)	4000
		18	Շենքերի տանիքների վրա գոյացած ձյան, սառույցի, ինչպես նաև տանիքների եզրերից կախված սառցալեզվակների մաքրում՝ պատվիրատուի պահանջով	1000
		19	Շքամուտքերի, մուտքերի առջևից ձյան և սառույցի հեռացում, ինչպես նաև ավազով և աղով մշակում	300

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար

Է.ԳԵՎՈՐԳՅԱՆ _____
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Քլիներս» ՍՊԸ
ք. Երևան, Կոմիտաս 36գ, բն. 78
ՀՎՀՀ 00130286
«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570018464820100
Տնօրեն

Գ. ՊԱՊԻԿՅԱՆ _____
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 2
« 24 » հունվարի 2020 թ. կնքված
ՀՀՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 2.1
«24» հունվարի 2020 թ. կնքված
ՀՀՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն